ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 116-Ա « 13 » հունվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Արտաշես Հովհաննիսյան Սամվելի» ԱՁ-ի դիմումը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.249-Ն որոշման հավելվածով՝

1. «Արտաշես Հովհաննիսյան Սամվելի» ԱՁ-ին Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով 2026 թվականի հունվար ամսվա համար տրամադրել Երևան քաղաքի Աթոյան փողոցի հ.43/3, Գ.Հասրաթյան փողոցի հ.14, Կոմիտասի պողոտայի հ.55, Մամիկոնյանց փողոցի հ.56, Հերացու փողոցի հ.5/1, Սևակի փողոցի հ.42, Րաֆֆու փողոցի հ.29/4, Ծարավ Աղբյուրի փողոցի հ.59/1, Մ.Խուդյակովի փողոցի հ.177/6, Արարատյան փողոցի հ.89/7, Բագրատունյաց փողոցի հ.7 հասցեին կից, Բագրատունյաց փողոցի հ.7 հասցեի հարևանությամբ, Գ.Նժդեհի փողոցի հ.1, Շոպրոնի փողոցի հ.8, Բ.Մուրադյան փողոցի հ.5, Գյուրջյան փողոցի հ.1/3, Մոլդովական փողոցի հ.4, Լվովյան փողոցի հ.1, Շինարարների փողոցի հ.25, Շիրազի փողոցի հ.հ.48-74 և 52/2, Մազմանյան փողոցի հ.հ.4 և 16 և Նազարբեկյան փողոցի հ.19 հասցեների դիմաց թվով 24 ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն:

2. Ընդունել ի գիտություն, որ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման թույլտվության հունվար ամսվա համար սահմանված տեղական վճարը վճարված է, իսկ ընթացիկ տարվա հաջորդ ամիսների համար տեղական վճարի գումարը վճարված լինելու դեպքում՝ թույլտվությունը համարվում է երկարաձգված:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման 1-ին կետում նշված «Արտաշես Հովհաննիսյան Սամվելի» ԱՁ-ի գործունեության ընթացքում Երևան

քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ